

ՀԱԿՈՒՅԱՆ ԱՏՈՍ

Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի տնօրեն

Հայկական լեռնաշխարհի բնակավայրերի և աշխարհագրական տեղանունների որոշ մասի ծագումնաբանության հիմքում դարեր շարունակ դրվել են առասպելախառն պատմություններ և զանազան ավանդություններ¹, դրանցից շատերին տրվել է գիտականորեն հիմնավորված բացատրություն: Մեր ուսումնասիրության առարկան Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տեղանվան ստուգաբանությունն է՝ պատմության համատեքստում: ՀՍՍՀ Վարդենիսի շրջանի Մեծ Մազրա գյուղը վերանվանվեց Մեծ Մասրիկ ՀՀ Գերագույն խորհրդի 1991թ. ապրիլի 3-ի N Ն-0282-Ո որոշմամբ²: Անվանադրման համար հիմք ծառայեց բնակավայրի միջով հոսող Մասրիկ գետի անվանումը: Նկատենք, որ Մազրա անունով միայն պատմական Հայաստանում հայտնի է հիսունից ավելի տեղանուն (հիմնականում՝ գյուղեր) և նույնքան էլ Մերձավոր Արևելքի երկրներում:

Նախ նկատենք, որ «Մազրա»-ն (ղասական ուղղագրությամբ՝ «Մազրայ») միջին հայերեն բառ է: Ըստ Հրաչյա Աճառյանի ստուգաբանության՝ «Մազրա /*Mazra*'a- Մազրայ/» բառն առաջացել է արաբերեն **gawnti** արմատից և նշանակում է արտ, հանդ, արտորայք, շրջակա մշակելի հողեր³: Երկրորդ նշանակությամբ «մազրա» բառն ունի ժողովրդական (բարբառային) ծագում և նշանակում է բնակավայրից հեռու ձորերում գտնվող գոմ-փարախ⁴:

Համեմատական ուսումնասիրությամբ պարզվում է, որ ժամանակակից արաբերենում «**Մազրա'ա** – المزرعة» նշանակում է նաև ագարակ (արդի իմաստով՝ ֆերմա), իսկ պարսկերենում «**Մազրա'ե** – مزرعه»-ն ստուգաբանվում է որպես հացահատիկի հող, գյուղակ, որը պատկանում է մայր գյուղին:

¹ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 147-203:

² ՀՀ ԳԽՏ 1991.04.15/7(987) Հոդ.129:

³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. III, Երևան, 1977, էջ 223:

⁴ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. 3, Երևան, 1974, էջ 459: Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. 2, Երևան, 1976, էջ 952:

Ստեփան Մալխասյանցը տվել է «մագրա» բառի երրորդ նշանակությունը հետևյալ կերպ. «Մագրայ քցել, այն է՝ բանի տեղ դնել»¹:

Անշուշտ, գյուղը Մագրա է կոչվել «արտ» և «շրջակա մշակելի հողեր» նշանակությամբ՝ պայմանավորված հենց Մեծ Մասրիկի աշխարհագրական դիրքով. այն գտնվում է Սևանա լճի արևելքում, Սևանի, Արևելյան Սևանի և Վարդենիսի լեռնաշղթաների գոգավորության միջև գտնվող ընդարձակ դաշտում, ունի արգավանդ վարելահողեր և ցանքատարածություններ:

Միջնադարի պատմիչ (13-14-րդ դ.դ.) Ստեփանոս Օրբելյանը ո՛չ իր մեծարժեք պատմության մեջ, ո՛չ էլ դրան կցված Տաթևի վանքին հարկ վճարող Սոթք գավառի համայնքների հարկացուցակում Մագրան չի հիշատակում²: Հետևաբար կա՛մ պատմագրի օրոք գյուղն այլ անունով էր կոչվում, կա՛մ գյուղը Տաթևի վանքին հարկ վճարող համայնքների շարքում չէր: Առավել հավանական է թվում երկրորդ տարբերակը, քանզի հաշվի առնելով տեղանվան արաբերեն ծագումը և նկատի ունենալով, որ արաբները Հայաստանում հայտնվել են 7-րդ դարում և հետագայում իրենց լեզվական դրոշմը թողել ոչ միայն բնակավայրերի ու անձնանունների, այլև ընդհանրապես հայերենի բառապաշարի վրա, պետք է ենթադրել, որ «մագրա» անվանումն ունի հին պատմություն: Միաժամանակ տարակուսանք է առաջանում այն իմաստով, որ պատմագրի նշած բնակավայրերի կամ համայնքների գրեթե բոլոր անվանումներն հայեցի են, ունեն հայկական արմատ, հետևաբար Օրբելյանի հիշատակած Սյունյաց եկեղեցուն (Տաթևի վանքին) հարկատու բնակավայրերի ցանկից գտնել և նշել, թե որն է Մագրայի հայկական հին անվանումը պարզապես սուբյեկտիվ և անուղղակի վարկած կհամարվի: Ընդ որում՝ ուսումնասիրողների գերակշիռ մասը ընդունում է, որ Մագրան հին բնակավայր է, սակայն դրա անվան մասին խոսելիս արձանագրում են, որ գյուղի հին անունը հայտնի չէ, ինչպես նաև չեն նշում գյուղի անվան բացատրությունը, թեև եղել են որոշ փորձեր: Օրինակ՝ 19-րդ դարակեսին Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցը իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» ուղեգրության մեջ անփութորեն

¹ Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հտ. 3, Երևան, 1944, ցուցակ 1, էջ 233:

² Տե՛ս Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, Երևան, 1986:

Մագրան նույնացնում է Մագազի հետ¹, իսկ նրանից հետո գյուղ այցելած Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը նշում է, թե «Մագրա նշանակում է արոտատեղ» և նույն նախադասության մեջ, ինքն իր ասածի վրա կասկածելով, շարունակում է. «թեև բավական շինվածոց հետքեր են երևում դաշտի վերա²»:

Վիմական արձանագրություններից առայժմ ամենավաղ թվագրվողներից մեկը, որտեղ հիշատակվում է «Մագրա» և «Մագրեցի» անվանումները, Տաթևի վանքի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու 1532թ. նվիրատվական վիմագիրն է, որի համաձայն Գեղարքունիքի մի քանի իշխանների հետ Մագրայի իշխանները ևս պարտավորվում էին տարին երկու կապալ (=16 կգ) ձեթ հատկացնել վանքին³, իսկ հիշյալ վանքի Պողոս Պետրոս եկեղեցու արևելյան պատին արտաքինից փորագրված և բավականին լավ պահպանված եռատող արձանագրության մեջ առկա «Պողոս Մագրեցի» հիշատակումը թվագրվում է ավելի վաղ՝ XIV դար⁴: Մաքենյաց հռչակավոր վանքը, որը հայտնի է տակավին 7-րդ դարից, իր հյուսիսային ճակատին (քիվի տակ) կրում է հետևյալ մեկ տողանոց արձանագրությունը. «**ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ՄԱՂԻԵՑԻ ԽՈՃԱ ՍԱՐԳԻՍՆ, ՈՐ ԵՏ ՎԱՍՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ :Բ: ԹՄՆ**»։ Սեդրակ Բարխուդարյանի կարծիքով՝ դա 17-րդ դարի վիմագիր է, սակայն կարծում ենք, որ այն հին է առնվազն մեկ դարով, քանզի հայ վաճառականներին «խոջա» են կոչել դեռևս 16-րդ դարից:

Ձեռագիր մատյաններում առաջին անգամ «Մագրա» անվանաձևին հանդիպում ենք Դավիթ եպիսկոպոսի հիշատակագրում, որտեղ ականատես գրիչը մանրամասն նկարագրում է Շահ-Աբասի իջևանումը Մագրայում և Մելիք Շահնազար Ա-ի ու նրա որդիների կողմից պարսից շահին հյուրընկալելու դրվագը. «**Եւ դարձեալ եկն ի երկիրն Գեղամայ, իջաւ ի Մագրայ գեղիս. եւ գնաց ի տունն պարոն Մէլիք Շահնազարին. Ապագ**

¹ Սարգիս արքեպիսկոպոս Զալայանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Երևան, 2016, էջ 311:

² Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գավառի, Երևան, 2016, էջ 391:

³ Դիվան հայ վիմագրության, պր. II, կազմող՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 27: Հմմտ. Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 136-139: Հմմտ. Հ. Վ. Կարապետյան, *Մեծ Մագրա գյուղի վիմագրերը*, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 2, էջ 234:

⁴ Դիվան հայ վիմագրության, պր. II, կազմող՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 17:

շահն նստաւ գիշեր մի իւր մեծամեծ նախարարաւքն...»¹: Այս դրվագը նույնպիսի մանրամասնությամբ հանդիպում ենք արդեն 17-րդ դարի պատմագիր Առաքել Դավրիժեցու մոտ. «Թիֆլիսից շահը դուրս եկավ, գնաց Գեղամա գավառը, արքունի բանակը այնտեղ բանակեց, իսկ ինքը շահը իջավ մելիք Շահնազարի տանը, որ Մազրա գյուղում էր, բնիկ նույն գյուղից: Մելիք Շահնազարը հայ էր, հավատով քրիստոնյա. նա իշխան էր հզոր ու փառավոր և շահին այնպես հյուրընկալեց, ինչպես վայել էր թագավորին. ինքը բարեկամ ու մտերիմ էր (Շահ Աբասին.-Ա.Հ.) և հարգված թագավորի մոտ: Այդ պատճառով էլ թագավորը թանկագին ու ազնիվ զգեստներ նվիրելով շքեղացրեց: Նրան գավառի մելիքության իշխանությունը պարգևեց, այլև դաստակերտներ, գյուղեր տվեց նրան ու նրա եղբայրներին: Հաստատուն հրովարտակ գրեց, թագավորական կնիքով կնքեց ու տվեց նրանց, որպեսզի հաստատուն լինի այդ ժառանգությունը նրանց ու նրանց զավակների համար սերնդեսերունդ մինչև հավիտյան»²:

1988թ. -ին հրատարակված Առաքել Դավրիժեցու «Պատմության» թարգմանիչ, առաջաբանը և ծանոթագրությունները կազմող Վարագ Առաքելյանը սույն դրվագի ծանոթագրությունում բոլորովին անհասկանալի ձևով թույլ է տվել մի սխալ: Նա գրում է. «Մազրա գյուղը գտնվել է այժմյան Վարդենիսի շրջանում, որ կոչվել է նաև Մեծ Մազրա. այժմ անվանվում է Ջոդ»³: Եվ տարօրինակն այն է, որ այժմ էլ շարունակում է գիտական գրականության մեջ շրջանառվել հիշյալ ծանոթագրության մեջ նշված բակավայրերի սխալ նույնացման փաստը⁴: Իրականում Մազրան Ջոդի (այժմ՝ Սոթք) հետ չպետք է շփոթել: Մազրան 7-րդ դարից հայտնի բնակավայր է, թեև նրա մասին գրավոր տեղեկությունները բավականին սուղ են: Շահ-Աբասի իջևանումը Մազրայում՝ Մելիք Շահնազարի տանը, վերաբերում է 1606 թվականին: 16-17-րդ դարերում Մազրան այդ նշանավոր մելիքական ընտանիքի նստավայր-ավանն էր, այստեղ է գտնվում նրանց տոհմական

¹ Սմբատ Տեր-Ավետիսյան, Յուզակ հայերեն ձեռագրաց Նոր-Ջուղայի [Ամենափրկիչ վանքի](#), հտ. 1, Վիեննա, 1970, էջ 68:

² Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 85:

³ Նույն տեղում, էջ 535:

⁴ Տե՛ս Նահապետյան Ռ. Ա., *Առաքել Դավրիժեցու տեղեկությունները հայության ժողովրդագրական պատկերի փոփոխությունների և հայկական տեղանունների մասին*, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, թիվ 1, Երևան, 2011, էջ 15:

դամբարանատունը, որի որոշակի մասը, չնայած ժամանակի ու հանգամանքների ավերածությանը, դեռ լավ պահպանված է գյուղում:

17-րդ դարավերջին գյուղը հայտնի էր «Կալեր» անունով: Սակայն 18-րդ դարում Սիմեոն Ա Երեանցի կաթողիկոսի «Ջամբո» աշխատության մեջ, որպես հայաբնակ գյուղեր, Կալերը և Մազրան (Մազրայ) հիշատակվում են առանձին- առանձին¹: Հովհաննես Եպիսկոպոս Շահխաթունյանցը արդեն հիշում է «Մեծ Մազրայ²» ձևով՝ այնտեղ նշելով 37 տուն:

19-րդ դարասկզբին այլազգի (թուրք) խաշնարածներն այն վերանվանել են «Կալը ագալու», «Կալագալու» (թուրքերեն՝ «**Qulu ağali**», որ թարգմանվում է «Ծառան խելացի է»), 19-րդ դարի երկրորդ կեսերից մինչև 1991թ. կրկին անվանակոչվել է «Մազրա», «Մեծ Մազրա» (Ե.Լալայանի 1908թ. բավականին հաջող կազմած քարտեզում՝ Մ.Մազրա), իսկ այժմ՝ «Մեծ Մասրիկ»: Ինչո՞ւ Մասրիկ կամ ի՞նչ է նշանակում Մասրիկ... Նման բառ հայերենում չկա, դա պարզապես «Մազրա» բառի հայերեն տարբերակն է, քանզի Մասրիկ գետը նախկինում կոչվել է Սավրից, Գիլի, Մազրա, Մազրաչայ և այլն, ինչպես որ Մասրիկի դաշտը՝ Մազրայի դաշտ, Գիլիի դաշտ, Սողքի լեռնադաշտ...

Հարկ ենք համարում հիշատակել, որ Խանասորի արշավանքից (1897թ.) հայտնի է նաև քրդական «Մազրիկ» ցեղախումբը, որն այս դեպքում որևէ առնչություն չունի «Մասրիկ» անվան հետ³:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ դարերի ընթացքում փոխվել են պատճառահետևանքային գործոնները. եթե նախկինում գետն իր անվանումը ստացել էր Մազրա գյուղի անունից, ապա այժմ գյուղն անվանակոչվեց Մասրիկ գետի անունով՝ վերագտնելով ինքն իրեն...

Բանալի բառեր՝ Մազրա, Մասրիկ, ցանել, արտ, շրջակա մշակելի հողեր, վիմագիր և ձեռագիր արձանագրություններ, Շահ Աբաս, Մելիք Շահնազարյաններ, տեղանուն, տեղանվան հայկականացում:

¹ Սիմեոն Կաթողիկոս Երեանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873, էջ 283:

² Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց, «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ», Վաղարշապատ, 2014, էջ 380:

³ «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 06.08.1961, թիվ 14, 983:

ABOUT THE ETYMOLOGY OF THE TOPONYM “MAZRA - MASRIK”

НАКОВЯН АТОМ

Director of Mets Masriks secondary school

The subject of the study is the etymology of the toponym of the village Mets Masrik of Gegharkunik Region, RA in the historical context. The word “Mazra” has originated from the Arabic stem “to sow” and means “a field” or “farm lands”. “Mazra” isn’t referred to by medieval historian Stepanos Orbelyan, and later on it was not either explained at all or wrong explanations were produced by others. There is not such a word “Masrik” in Armenian and it is the armenianized version of “Mazra”.

Key words: *Mazra, Masrik, sow, field, surrounding farm lands, lithographs and handwritten records, Shah Abas, Melik Shahnazaryan, location name, armenianization of the location.*

ЭТИМОЛОГИЯ ТОПОНИМА “МАЗРА - МАСРИК”

АКОПЯН АТОМ

Директор Мец Масрикской средней школы

Предметом исследования является этимология топонима села Мец Масрик Гехаркуникского марза (область) Республики Армения в контексте истории.

Слово “Мазра” произошло от арабского корня “сеять” и означает поле, окрестные обрабатываемые земли. Средневековый историк Степанос Орбелян не упоминает название “Мазра”, но более поздние мемуаристы или не толковали, или толковали неправильно. А в армянском языке нет слова “Масрик”, и это название - новый армянский вариант /**армянизированный**/ слова “Мазра”.

Ключевые слова: *Мазра, Масрик, сеять, поле, искусство, окрестные обрабатываемые земли, лапидарные надписи, рукописные памятники, шах Аббас, мелик Шахназарян, топоним, арменизация топонима.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.03.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 25.04.2019թ.: